մեր ըստ մտաւորականի և ըստ բարոյականի։ 400–ամեայ յոբելեան Հայ տպագրութեան է տօն համազգային, ուստի ամենեքեան պարտին մասնակից լինել յոբելեանի և խորհել վասն յաւերժացուցանելոյ զայս տօն քաղաքակրթութեան մերոյ՝ ազգօգուտ գործովք և ձեռնարկութեամբք։

Արդ՝ այսու Հայրապետական կոնդակաւ Մերով կարգեմք զՁեզ անդամս Յոբելենական Ցանձնաժողովոյ և յանձն առնեմք Ձեզ փութով գումարել ժողովս վասն կազմակերպելոյ զգործ յոբելենի մշակելոյ զմանրամասն ծրագիր մասնակցութեան Ս. Էջմիածնի 400-ամեայ յոբելենի Հայ տպագրութեան և ներկայացուցանել ի վախճանական տնօրէնութիւն Մեր։

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի Մէնջ։ Ամէն։

ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

25 Ապրիլի 1912 ամի
Ըստ տոմարի ՌՅԿԱ
ի Հայրապետութեան Մերում Ա. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ. թ. 302.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԱԶԳԻՍ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ ս. Էջմիածնի ս. Սինոդի անունով, որով հաստատուեց և վերադարձուեց ի ճիշտ գործադրութիւն՝ Սինոդի ներկայացրած Մայր Աթոռի Գէորգեան Հոգևոր ճեմարանի, Վեհարանի, Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի, Գանձակի, Ախալցխայի, Գօրու Հոգևոր կառավարութիւնների, Ծաղկէվանք, Ծիրանաւոր և Թէլէթ ուխտատեղիների 1912 թ. նախահաշիւները։ 13 ապրիլի. թ. 2.

Կոնդակ Մայր Աթոռի միաբան Տ. Բագրատ վարդապետ Վարդազարեանի անունով, որով կարգուեց դիւանապետ Վեհափառ Հայրապետի դիւանի։ 13 ապրիլի. թ. 3.

Նորին Սրբութեան մակագրութիւն ս. Էջմիածնի Սինոդի 16 ապրիլի թ. 749 յայտարարութեան վրայ, որով

հաստատուեց և պատուիրուեց ճշտութեամբ գործադրել Երևանի Կոնսիստորիայի, Աղէքսանդրապոլի, Դարսի, Հին-Նախիջևանի և Տաթևի Հոգևոր կառավարութիւնների 1912 թ. նախահաշիւները։ 17 ապրիլի. թ. 248.

Դիւանի գրութեամբ ծանուցուեց Տրապիզոնի առաջնորդ Տ. Սամուէլ վարդապետին, ի պատասխան նորա գրութեան, թէ Վեհափառ Հայրապետի օծման օրը դեռ որոշ չէ։ 18 ապրիլի. թ. 250.

Նոյն իմաստով գրուեց նաև Կարնոյ առաջնորդ Տ. Սմբատ եպիսկոպոսին ի պատասխան նորա գրութեան։ 18 ապրիլի. թ. 251.

Ծանուցուեց նաև գերապատիւ Տ. Յակոբ եպիսկոպոս Աշոտ Փափազեանին ի պատասխան նորա գրութեան։ 18 ապրիլի. թ. 252.

Դիւանի գրութեամբ խնդրուեց Կալկաթաբնակ յայտնի վաճառական պ. Յարութիւն Աբգարին, որ աշխատի բացատրել Անգլիական պաշտօնական աւանդապահին, եթէ հնարաւոր է, Գէորգ աղա Մանուկեանի ս. վանքին նուիրաբերած և անգլիական դրամատանը պահ տուած դրամագլխի տոկոսները ուղղակի փոխադրել Էջմիածին Նորին Սրբութեան անունով։ 19 ապրիլի. թ. 253.

Դիւանի գրութիւն Կ. Պոլսի Հայոց Պատրիարքի անունով, որի հետ ուղարկուեց Եկատերինա Նադիրեանի կտակի վաւերական պատճէնը հայերէն թարգմանութեամբ։ 19 ապրիլի. թ. 257.

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Մայր Տաճարի Լուսարարապետին՝ Տաճարում գործածելու համար Թելաւցի Գէորգ աւաք քահանայ Սարգսեանի նուիրաբերած 1867 և 1890 թ. թ. տպագրուած երկու աւետարաններ արծաթապատ կազմով։ 19 ապրիլի. թ. 258.

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով ծանուցուեց, թէ Նորին Սրբութեան Ս. Պետերբուրգ գնալու շքախմբի անդամներն են՝ Սինոդի անդամ Տ. Մեսրոպ ե-

պիսկոպոս, Երևանի փոխ-թեմական Տ. Խորէն եպիսկոպոս, Դիւանապետ Տ. Բագրատ և Սինոդի անդամ Տ. Մատթէոս վարդապետներ և առաջադրուեց տալ վերոյիշեալ չորս հոգևորականներին անցագիր և ընդհանուր ճանապարհածախս առ այժմ 1500 ռուբլի։ 20 ապրիլի. թ. 260.

Կոնդակ նոյն Սինոդի անունով, որով առաջադրուեց 1912 թ. յունուարի 1-ից տալ Սինոդի անդամներին սննդադրամով հանդերձ 100-ական ռուբլի և մուծել այդ յաւելումը 1912 թ. նախահաշուի մէջ։ 21 ապրիլի. թ. 261.

Նորին Սրբութեան մակագրութեամբ ուղարկուեց ս. Էջմիածնի Սինոդին Յովհաննէս Կիւմշեանի կտակի տոկոսները՝ Կ. Պոլսի Պատրիարքից ուղարկած 14 օսմ. ոսկի 44 պիաստր արժողութեամբ թ. 9170 փոխանակագիրը և առաջադրուեց Պատրիարքարանին անդորրագիր ուղարկել։ 21 ապրիլի. թ. 262.

Նորին Սրբութեան մակագրութեամբ հաստատուեց ս. Էջմիածնի Սինոդին ի ճիշտ գործադրութիւն՝ Տաթևի, Խորվիրապի, Գեղարդի, Երնջակի, Կարմիր վանքի, Մողնու, Սևանի, Հառիճի, Կեչառիսի, Դարալագեազի, ս. Խաչի, Խծկոնից, Անիի և Թովմայ Առաքելոյ վանքերի 1912 թ. նախահաշիւները։ 23 ապրիլի. թ. 269.

Նորին Սրբութեան մակագրութեամբ հաստատուեց և ուղարկուեց ս. Էջմիածնի Սինոդին ի ճիշտ գործադրութիւն Ղարաբաղի Կոնսիստորիայի և Նուխու Հոգևոր կառավարութեան 1912 թ. նախահաշիւները։ 23 ապրիլի. թ. 270.

Նորին Սրբութեան մակագրութիւն Վրաստանի Հայոց թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Եփրեմ եպիսկոպոսի անունով, որով ծանուցուեց, թէ ի նկատի ունենալով Հայոց եղեկեցական–ծխական դպրոցներում պաշտօնավարող ուսուցիչների և վարժուհիների մանկավարժական կրթութիւն և փորձառութիւն ձեռք բերելու անյետաձգելի անհրաժեշտութիւնը, արտենուում է ամառուայ արձակուրդին բանալ զուտ մանկավարժական դասընթացներ Վրաստանի թեմի ժամ. կառավարիչ Տ. Եփրեմ եպիսկոպոսի

հովանաւորութեան տակ, նախապէս թոյլտուութիւն տա-տալով քաղաքական իշխանութիւնից։ 24 ապրիլի. թ. 299.

Դիւանի գրութիւն Հայ տպագրութեան 400-ամեայ Յոբելենական Յանձնաժողովի անունով, որով յանձնա-բարուեց ընտրել նախագահ քարտուղար և ապրիլի 28-ին ժողովուել լսելու Նորին Սրբութեան այդ առթիւ տուած թ. 302 կոնդակը։ 28 ապրիլի. թ. թ. 305 և 306.

Մակագրութեամբ թոյլ տրուեց Թիֆլիզի Արշակ քահ. Մինասեանին հրատարակել իւր կազմած «Գործք առաքե-լոց» դասագիրքը։ 1 մայիսի. թ. 311.

Դիւանի գրութեամբ շնորհակալութիւն յայտնուեց պ. Գրիգոր Մարգար Գրիգորեանին, որ ուղարկել է Նորին Սրբութեան իւր թանգմանած հայերենից անգլիերէն Տ. Մա-ղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանի Հայոց եկեղեցու պատ-մութիւնը։ 3 մայիսի. թ. 320.

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Տ. Յուսիկ արք-եպիսկոպոսին քննելու Թիֆլիզի առևտրական դպրոցի կրօնուսոյց դպիր Սարգիս Քամալեանի կազմած «Մարգա-րէներ և հրէից ազգի վիճակը մինչև Հերովդէս» դասա-գիրքը։ 5 մայիսի. թ. 327.

Կոնդակ Մայր Աթոռի Գէորգեան Հոգևոր ճեմարանի Տեսուչ Տ. Բազրատ վարդապետի անունով, որով կարգա-դրուեց 1912/13 ուսումնական տարուայ սեպտեմբերից բանալ երկրորդ դասարան Գ-րդ դասարանի ծրագրով բար-ձրացնելով յաջորդ դասարանների դասընթացքն ևս, որ դպրոցական բաժին աւարտողներն մտաւորապէս և բարոյա-պէս աւելի պատրաստուած լինին։ 8 մայիսի. թ. 339.

Դիւանի գրութեամբ յայտնուեց Հայ տպագրութեան 400-ամեայ Յոբելենական Յանձնաժողովին Նորին Սրբու-թեան ամսոյս 7-ի նոյն Յանձնաժողովի յայտարարութեան վրայ արած հետևեալ մակագրական-կարգադրութիւնը. «Ի նկատի ունենալով Յոբելենական Յանձնաժողովի և Գէորգեան Հոգևոր ճեմարանի Մանկավարժական Խորհրդի

յայտնած կարծիքներն ու ցանկութիւնները, կարգադրում և հաստատում ենք.

ա. Միացնել հայ տպագրութեան 400-ամեայ յոբելեանի հանդէսը տառերի գիւտի 1500-ամեակի հետ և կատարել այդ մեծ յոբելեանն այս տարի հոկտեմբերի 13-ին ս. Թարգմանչաց տօնին.

բ. Հիմնել դպրոցական ֆոնդ մեր հոգևոր և եկեղեցական–ծխական դպրոցների բարգաւաճման և բազմացման համար.

գ. ս. Էջմիածնի մատենադարանի կարևոր ձեռագիրները պարբերաբար հրատարակել.

դ. Մեծ յոբելեանի առթիւ հրատարակել մի գիտական ժողովածու.

ե. Հրատարակել հանրամատչելի գրքոյկ համաձայն Յոբելենական Յանձնաժողովի Գ-րդ արձանագրութեան Գ-րդ յօդուածի և ցրուել բոլոր դպրոցների աշակերտներին և ժողովրդին ձրի.

Գրել այս մտքով կոնդակներ Յանձնաժողովի և բոլոր առաջնորդների անունով, իսկ դպրոցական ֆոնդի ժողովարարութեան համար Կովկասի Տ. Փոխարքայից թոյլտուութիւն ստանալուց յետոյ։ 8 մայիսի. թ. 344.

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ.

Կոնդակներ օրհնութեան և գոհունակութեան հանգուցեալ Միրզաջան Խաչատրեանի կտակակատարներ պ. պ. Աղէքսանդր Մելիք–Ազարեանի և Թէոդորոս Խաչատրեանի անունով, իրենց պարտականութիւնը՝ որպէս կտակակատարների՝ ուղղութեամբ և սրբութեամբ կատարելու համար։ 30 ապրիլի. թ. թ. 308, 309.

Կոնդակ օրհնութեան Սիմֆերոպոլցի պ. Պետրոս Խաչակեան Թուխալեանցի անունով՝ տեղական ծխական դրպրոցին 5000 ռ. նուիրաբերելու համար, որի տոկոսներով իւր անուամբ սաներ պէտք է սովորեն դպրոցում, իսկ